Կ Ա Ր Ծ Ի Ք

Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում» թեմայով ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում» վերտառությամբ ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է ԲՈՒՀ-ում «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի գիտա-տեսական հիմնավորմանը, կենսագործման էական հարցադրումների հետազոտությանն ու գործնական լուծումների առաջադրմանը:

Բավարար չափով հիմնավորված են նաև հեղինակի փաստարկները թեմայի արդիականության վերաբերյալ:

Գիտական հետազոտության որակի, ընտրված նյութի շարադրանքի, լեզվառճի, գիտագործնական արժեք ներկայացնող հարցադրումներ ընտրելու, համապատասխան գրականությունից, տեսական աղբյուրներից ու պրակտիկ նյութերից օգտվելու հանգամանքների համար անհրաժեշտ եզրահանգումներ ներկայացնելու տեսանկյունից սույն աշխատությունը բավարարում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Հեղինակն ուսումնասիրել, ցուցաբերել ու ներկայացրել է համանշանակ մասնագիտական գրականություն և դրսևորել է թեմային առնչվող աղբյուրների իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից համարժեքորեն օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու որոշակի գիտակցված ունակություն: Վերլուծվել է ոչ քիչ թվով մանկավարժական, պատմական, հոգեբանական, արվեստաբանական, դեկորատիվ, կիրառական արվեստին նվիրված գրականություն:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս

յուրակերպ հիմնավորումներին ուղեկցող դատողություններ անելու և ինքնուրույն եզրակացությունների հանգելու որոշակի ունակություն:

Ատենախոսությունը տեսական և գործնական առումով հանդիսանում է արդիական և արժեքավոր, աչքի է ընկնում ինքնատիպ ձևակերպումների և սեփական դատողությունների, հոգեբանամանկավարժական հայեցակե-տերի լայն շերտերով:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքն առավել տրամաբանական դարձնելու համար: Տարորոշ և առանձին հիմնահացերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է առանձին ու կոնկրետ խնդիրների ԲՈՒՀ-ում դասավանդման գործընթացի ամբողջական հետազոտությանը:

ԲՈՒՀ-ում դասավանդման գործընթացի համար որոշակի գործնական արժեք են ներկայացնում ատենախոսությունում ներկայացված մի շարք տեսական վերլուծություններ, որոնք հնարավորություն են ընձեռում գործնականում ճիշտ և հիմնավորված կազմակերպել ուսանողների ուսումնական գործընթացը և դասավանդման մեթոդիկան:

Ատենախոսությունում պատմագիտական, արվեստագիտական, ժողովրդագրական, աշխարհագրական փաստարկների հիման վրա հիմնավորված են ԲՈՒՀ-ում և այլ ուսումնական հաստատություններում, հագուստի մոդելավորման որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման նախադրյալներն ու փուլերը:

Մշակվել է ազգային տարազի համատեքստում հագուստի մոդելավորման դասավանդման ծրագրի բովանդակությունը, ուղղված առարկայի ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ուսուցման առանձանահատկությունների ուսումնասիրմանը, ճշգրտմանն ու մեթոդա-կան կատարելագործմանը: Ըստ ուսումնական ժամանակահատվածի և ըստ կուրսերի ներկայացված է դասավանդման օրինակելի թեմատիկան և ժամանակացույցը:

Անդրադառնալով ԲՈՒՀ-ում «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի գործող համակարգին ու կարողություններին, հեղինակը դրանց փոխհարաբերությունը դիտարկել է սովորողների ազգային տարազի իմացության այժմյան մակարդակի տեսանկյունից և դրա կենսագործման գործընթացների համատեքստում հանգել հավաստի եզրահանգումների:

Ատենախոսության հեղինակը հետազոտել է դարերի ընթացքում հայ իրականության մեջ տարբեր տարածաշրջաններում հայկական տարազի տարաբնույթ դրսևորումները, դրանք համադրել մեզ հասած հսկայական ժառանգությանը և եզրակացրել, որ դրանց ներկայացնելը ուսանողությանը կբարձրացնի նրանց հետաքրքրությունը այդ բնագավառի գիտելիքների յուրացման նկատմամբ, կխորացնի ու կհագեցնի սովորողին անհրաժեշտ գիտելիքների պաշարով, կնպաստի նրանց վերստեղծմանը, ինչպես նաև կհանդիսանա ստեղծագործական, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակության աղբյուր:

Ատենախոսության հավելված 1-ում տեղին է ներկայացված ըստ տարածաշրջանների ու տարբեր ժամանակների հայկական տարազների, ինչպես նաև ժանյակների, գոգնոցների, զարդակարեր և ասեղնագործության այլ բաղադրիչների պատկերներն ու նկարները:

Կատարվել են նաև գիտափորձեր, որոնց արդյունքները կարող են հիմք հանդիսանալ հագուստի մոդելավորման համալիր դասընթացի հնարա-վորությունների բացահայտմանն ու նպաստել սովորողների հայրենա-գիտական, մասնագիտական, գեղարվեստական, ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացին:

Պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը, կարծում ենք, ինչպես նյութի, այնպես էլ հիմնավորվածության չափանիշներով, ինչպես նաև աշխատության կառուցվածքը և ծավալը, հիմնականում համապատասխանում է ատենախոսությանը ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Ատենախոսությունը, որոշ մասնակի բացառություններով հանդերձ, շարահյուսված է հստակ, պատշաճ լեզվառճով: Ընդհանուր առմամբ հեղինակին հաջողվել է ապահովել ընտրած նյութի շարադրանքի հիմքը կազմող ներքին տրամաբանությունը:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնական սկզբունքներին առնչվող հրատարակված հոդվածները տպագրված են ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում և ապահովում են պաշտպանությանը ներկայացվող պահանջները:

Միևնույն ժամանակ ուսումնասիրված ատենախոսությունը զուրկ չէ առանձին թերություններից, վիճելի դրույթներից, որոնց վերաբերյալ ներկայացվում է հետևյալ տեսակետները:

Ատենախոսությունն ունի որոշակի վերլուծական բնույթ, սակայն այն ավելի էական և օգտաբեր կլիներ, եթե Հանրապետության ամենատարբեր տարածաշրջաններում, ինչպես նաև ուսումնական հաստատություններում, իրականացվեին գործնական ուսումնասիրություններ, կոնկրետ հետազո-տություններ և կատարվեր դրանց ամփոփում:

Ատենախոսությունը զերծ չէ խմբագրական ու շարահյուսական բնույթի որոշ թերություններից:

Երբեմն բերված է օգտագործված գրականության լրիվ պարբերությունների շարադրանք, սակայն ոչ որպես ուրիշի ուղղակի խոսք, չնայած նշվել է հեղինակը, աշխատությունը, էջը (օրինակ՝ էջ 26, 2-րդ պարբերություն և այլն): Որոշ դեպքերում ուրիշի ուղղակի խոսքը չի անջատվել հիմնական տեքստից – էջ 22, էջ 25 և այլն:

Գրականության ցանկի որոշ աշխատություններում նշված է միայն առաջին հեղինակը, բաց է թողնված հաջորդը (էջ 18՝ թիվ 51, էջ 20՝ թիվ 4 և այլն):

Կարծում ենք ոչ տեղին է այն կտրուկ ձևակերպումը, ըստ որի. «Հագուստի մոդելավորման հիմունքներ են ուսումնասիրում նկարիչներ, դիզայներներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատություններում, կենցաղի և սպասարկման ոլորտի պետական և մասնավոր հաստատություններում, ...որտեղ դասավանդումը չի հենվում ժողովրդական կիրառական արվեստի դասական ավանդույթների վրա,... որի հետևանքով շրջանավարտները ի վիճակի չեն լուծել բարդ ստեղծագործական խնդիրներ, չունեն սեփական գեղարվեստական ծրագիր» (էջ 17): Տեղին կլիներ գրել «ոչ բոլոր, կամ որոշ», իսկ ուսումնասիրում բառը՝ «ուսումնասիրվում»:

Քիչ չեն կետադրական ոչ միատեսակ մոտեցումները: Մի շարք ենթավերնագրերի վերջում չկա կետադրություն, մյուսներում դրված է միջակետ, կամ ստորակետ, կամ վերջակետ: Ենթավերնագրերի մի մասն ընդգծված է, մյուսները՝ ոչ: Նույնը՝ շեղատառերով՝ էջեր 60, 61, 89, 92 և այլն:

Ատենախոսությունում, որպես գիտական հիմնախնդիրների լուծման առաջին նախադրյալ կարևոր է համարվում եզրութաբանությունը, բառապաշարը: Ինքնին վիճահարույց համարելով սույն աշխատանքի եզրութաբանական որոշ բառապաշարի օգտագործման պարագան, կարծում ենք ատենախոսության հեղինակը պետք է փորձեր ձեռնպահ մնալ այլալեզու որոշ եզրույթների կիրառումից:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ մեր որոշ նկատառումները, հարկ ենք համարում նշել, որ դրանք չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքի առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Սրանով հանդերձ Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս.
Արվեստաբանական գիտությունների թեկնածու,
«Տերյան մշակութային կենտրոն» հ/կ ղեկավար՝ Լ. Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ

20 մարտի 2025թ.

Հաստատում եմ՝
Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ